ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀՈՒՄԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԹՈՓՈՒԶՅԱՆ Ա. Օ.

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ

«Մարդուն շրջապատող միջավայրի հիմնախնդիրների մասին ՄԱԿ-ի ստոկհոլմյան կոնֆերանսի հռչակագրի» առաջին կետով հռչակվում է, որ «Մարդը իր շրջակա միջավայրի միաժամանակյա ստեղծողն ու կառուցողն է: Այդ միջավայրն է, որն ապահովում է նրա ֆիզիկական գոյությունը և հնարավորություններ ստեղծում նրա մտավոր, բարոյական, սոցիալական և հոգևոր զարգացման համար: Մարդուն շրջապատող երկու միջավայրերն էլ՝ թե բնական, թե իր կողմից ստեղծված, վճռական նշանակություն ունեն նրա բարեկեցության և մարդու հիմնական իրավունքների իրականացման համար:» [1] Այս տեսանկյունից՝ սովորողին շրջապատող սոցիալ-մշակութային միջավայրի դաստիարակչական և զարգացնող դերը, սովորողի ինքնազարգացմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծմանը սովորողի մասնակցության անհրաժեշտության գիտակցումը նոր իմաստ է ստանում:

Սոցիալական մանկավարժության ներկայացուցիչները մարդուն շրջապատող միջավայրը համարում են նրա զարգացման վրա ազդող ամենակարևոր գործոնը: Այս ոլորտի մեծագույն ներկայացուցիչներից մեկը՝ Էմիլ Դյուրքհեյմը (1858-1917), «Քաղաքակրթության փուլերի և կոլեկտիվ պատկերացումների հայեցակարգում» իր աշխատության մեջ մեծ տեղ է տալիս աշակերտին շրջապատող միջավայրի ազդեցության գործոնին՝նշելով , որ դաստիարակության ամենանպատակահարմար միջավայրն այն է, որտեղ ձևավորվում և կայանում են անձի բարոյական ուժերը: Նա ընդգծում է, որ դաստիարակության գործընթացի կառավարումը պետք է իրականացվի իրավական չափաբաժնով՝ երեխայի ՛՛կույր հնազանդության՛՛ բացառմամբ: [2, 225]

Ֆրանսիացի գիտնական Ալենը /Էմիլ Շարտիե /1868-1951/ մանկավարժական լավագույն միջավայրը համարում է «մանուկների ժողովուրդը»: Նա սահմանել է դաստիարակության ֆունկցիայի երկիմաստության գաղափարը, այն է.՝ Երեխային «կյանքին պատրաստել, այդ կյանքի կառուցմանը նրան մասնակից դարձնելու միջոցով:» [2, 230]

Գերմանացի գիտնական Ադոլֆ Ֆերյերը /1879-1960/ իրավամբ գտնում է, որ կրթական միջավայրը պետք է դաստիարակի ՛՛ոչ թե չոր ինտելեկտուալներ, այլ կենդանի մարդկանց, որոնք հաջողությամբ գործում են ցանկացած սոցիալական միջավայրում՛՛: [2, 237]

Ժամանակակից մանկավարժությունը մեծ տեղ է տալիս կրթական միջավայրի դաստիարակչական դերին ու հումանանցման հիմնախնդրին՝ քանի որ դրանով է

պայմանավորված սովորողի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը, որից էլ բխում են ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքն ու դրդապատճառները, նրա սոցիալականացումն ու իրեն մանկական համակեցության լիիրավ անդամ համարելու զգացումը:

Ի՞նչ է նշանակում հումանացնել երեխայի միջավայրը: Ըստ Ն. Կռիլովայի՝ դա ավագների և մանկական կոլեկտիվների համագործակցության ապահովումն է + համամարդկային և ազգային արժեքների մասին ինտեգրացված գիտելիքների և դրանց նկատմամբ վերաբերմունքի դաստիարակությունը + անձնակողմնորոշված դաստիարակությունը, երեխայի հետաքրքրությունների, պահանջմունքների, հակումների և պոտենցիալ հնարավորությունների հաշվառումը և դրանց իրականացման համար պայմանների ստեղծումն է: [3 էջ 219]:

Մեր կարծիքով, կրթական միջավայրի հումանացում ասելով՝ պետք է հասկանալ ուսումնական հաստատության տարածքում և նրա շուրջը գտնվող նյութատեխնիկական, խորհրդանշանային, տեղեկատվական և հոգեբանամանկավարժական պայմանների ամբողջության մանկավարժականացում, դրանց նկատմամբ վերաբերմունքի դաստիարակություն, բոլոր սովորողների ինքնազարգացման և ինքնաիրացման համար հավասար և մատչելի պայմանների ու հնարավորությունների ստեղծում:

Ժամանակակից դպրոցում կրթական միջավայրի կազմակերպման և ստեղծման գործընթացը դպրոցի տնօրենի կառավարչական կարևորագույն գործառույթներից մեկն է: ՈՒստի ուսումնական հաստատությունում երեխայի միջավայրի հումանացման մանկավարժական առաջին պայմանը տնօրենի և մանկավարժական համայնքի նվիրվածությունն է երեխայի բարձրարժեքության և մանկության բացառիկության գաղափարին:Երեխան արժեք է, ոչ մի երեխա նման չէ մյուսին, յուրաքանչյուրն ինքնատիպ է, անկրկնելի, յուրահատուկ: Մանկավարժությունը պետք է պահպանի և պաշտպանի այդ առանձնահատկությունները: Մանկությունն էլ ոչ թե երեխային ապագա կյանքին նախապատրաստելու ժամանակահատված է, այլ կյանքն է, որն այս պահին նա ապրում է և որը բացառիկ հետք է թողնում իր ողջ կյանքի վրա:Հետևաբար մենք՝մեծերս պարտավոր ենք կազմակերպել և պահպանել Մանկությունը:

Երկրորդ պայմանը համախոհներից կազմված մանկավարժական համայնքի առկայությունն է: Համայնք, որը ա/ համակերպվում է իր համահեղինակի դերի հետ՝ երեխայի անձի զարգացման և կայացման գործընթացում: Մանկավարժների համայնք, ով գիտակցում է, որ մանկավարժի ազդեցությունը չափազանց մեծ է երեխայի վրա, սակայն այդ ազդեցությունը միակն ու վերջնականը չէ, այլ մեկը տարատեսակ ազդեցություններից և ամենակարևորը՝

երեխան է որոշում, ո՞ր ազդեցությունը ո՞ր չափով ընտրել: Հետևաբար, որոշիչը երեխայի ընտրությունն է, ինքն է իր զարգացման հեղինակը, մանկավարժն էլ ծնողների հետ գլխավոր համահեղինակներից մեկն է, բ/ գիտակցում է, որ դպրոցը ապաքաղաքական ուսումնական հաստատություն է և բացառում է այն քաղաքական մրցապայքարի կամ վեճերի թատերաբեմ դարձնելու երևույթը, գ/համոզված է, որ բարենպաստ կրթական միջավայրի ստեղծումը կարևոր ու անհրաժեշտ է երեխայի ինքնազարգացման և ինքնադրսևորման համար: Հասկանում է, որ այդ նպատակին հասնելու համար պետք է ծանոթ լինի էրգոնոմիկայի կանոններին, /նման առարկա պետք է մտցնել մասնագիտական կրթության մեջ/ կարողանա հաղթահարել առարկայական էգոիզմը, որոշումներ կայացնելիս հաշվի առնի կրթական միջավայրի առանձնահատկությունները երեխայի ինքնատիպության և անհատականության պահպանման, նրան դիմազրկելու անթույլատրելիության, երեխաների հարմարավետության, անվտանգության, ուսման նկատմամբ վերաբերմունքի և նրանց վարքի վրա թողնելիք ազդեցության տեսանկյունից: Եվ ամենակարևորը՝ որքանով է մանկական համակեցությանը վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս հաշվի առնում երեխաների կարծիքն ու ձայնը և արդյո՞ք կարողանում է ապահովել նրանց մասնակցությունը դպրոցական կյանքի կազմակերպմանը, հարմարմանն ու պլանավորմանը:

Երրորդ պայմանը վերաբերում է դպրոցում ուսուցչի կարգավիճակին և նրա համար ստեղծված հնարավորություններին: Նրանով, թե որքանո՞վ են դպրոցում պայմաններ ստեղծված ուսուցչի ֆիզիկական և հոգեբանական հարմարավետությունն ու մասնագիտական ազատությունն ապահովելու, առաջատար մանկավարժական փորձը ներդնելու, դպրոցի ներսում ուսուցչի պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու համար: Հակառակ դեպքում ավելորդ է խոսել նրա կողմից ստեղծվելիք հնարավոր բարենպաստ միջավայրի կամ երեխային ազատություն տալու մասին՝ երբ ինքը իր մասնագիտական գործունեության մեջ ազատ ու ինքնուրույն չէ: Ըստ մեր կողմից ուսուցիչների շրջանում անցկացված հարցումների՝ դպրոցների մեծամասնությունում դեռևս այս հարցերը լուծման կարիք ունեն:

Չորրորդ պայմանը կրթական միջավայր նախագծելու և ստեղծելու ուսուցչի կոմպետենցիաների առկայությունն է:

Կրթական միջավայրի հումանացումը հնարավոր է, եթե ուսուցիչը կարողանա ստեղծել. ա/յուրաքանչյուր երեխայի բարեկեցությունն ապահովող միջավայր: Հոգեբանական միջավայր, որտեղ յուրաքանչյուր երեխա զգում է իր պատկանելիությունը տվյալ համակեցությանը (դասարանին) և հարմարավետության զգացում ունի: Միջավայր, որտեղ ուսուցիչը հարգալից վերաբերմունք ունի երեխայի նկատմամբ և նրան հետաքրքրում են երեխայի զգացմունքները, գաղափարներն ու կյանքը: Մթնոլորտ, որտեղ երեխաները

հնարավորություն ունեն ինքնադրսևորվելու: Շրջապատ, որը խթանում է երեխաների ճանաչողական և գործունեական սահմանների ընդլայնումը և դրանց զարգացման ու ուսուցման համար ընդունելի ռիսկերի գնալու անհրաժեշտությունը:

բ/ ֆիզիկական միջավայր, որը գրավիչ է, անվտանգ, առողջ, ներառական և խթանում է երեխաներին սովորել, լինել ինքնուրույն և զբաղվել հետազոտությամբ: Այսինքն, ուսուցիչը. ապահովում է ֆիզիկական միջավայրի անվտանգությունն ու նրա վերահսկողությունը: Հոգում է , որ այն համապատասխանեցված և հարմարեցված լինի յուրաքանչյուր երեխայի կարիքներին, համապատասխանի նրա հետաքրքրություններին, հակումներին ու պահանջմունքներին, նրանց բազմազան գործունեության համար լինի գրավիչ: Ջանում է տարածքում ստեղծված ակտիվության կենտրոնները տրամաբանորեն տեղաբաշել և սահմանազատել: Օգտագործում է երեխաների զարգացումը խթանող մատչելի տարբեր նյութեր, որոնք նրանց մեջ առաջացնում են հետազոտելու, խաղալու և սովորելու ցանկություն, միջավայրի պլանավորմանը, կազմակերպմանը, պահպանմանը մասնակցելու մղում: [4, 207-216]

գ/ սոցիալական միջավայր, որը նպաստում է երեխաների շրջանում համակեցության զգացումի զարգացմանը և խմբի, դասարանի մշակույթի ստեղծման գործում նրանց մասնակցությանը: Այս առումով արժե հիշատակել ռուս էկոլոգ Դ. Մարկովիչի հետևյալ միտքը. «սոցիալական վարքագիծը առաջանում է այն բանի հետևանքով, որ մեկ մարդը կարևոր է մյուսի համար՝ որպես նրա միջավայրի բաղադրիչ: Ահա թե ինչու է կարևոր ուսումնասիրել սոցիալական միջավայրի ազդեցությունը մարդու վարքագծի վրա և մարդու ազդեցությունը հասարակական միջավայրի վրա»: [5, 53] ՈՒստի, ուսուցչի առաջին քայլերից մեկը պետք է լինի սոցիումում երեխաների վարքագծի վերաբերյալ իր սպասումների հստակ նշումը և հենվելով ժողովրդավարական արժեքների վրա՝ երեխաների հետ միասին դասարանի վարվեցողության կանոնների մշակումը՝ դրանով իսկ նպաստելով երեխաների մասնակցությանը իրենց դպրոցական կյանքի կազմակերպման գործին: Այս դեպքում այդ կանոնների կատարման պահանջը չի դիտվի որպես երեխաների ազատությունը սահմանափակող գործոն, իսկ դրանց կատարմանը հետևելը աշակերտների համար կկրի գիտակցված ենթարկվածության բնույթ: Աշակերտների մասնակցությունն այդ կանոնների մշակմանը և իրագործմանը նրանց սովորեցնում է միասին ապրել, պատասխանատվություն կրել սեփական և ուրիշների վարքի համար, հաղթահարել կոնֆլիկտները, համատեղ համաձայնության գալ, ընտրություն կատարել, որոշում ընդունել, խթանում է նրանց ինքնավերահսկողությունը և ինքնակառավարումը:

Հարմարավետ կրթական միջավայր ստեղծելու համար ուսուցիչը պետք է հավատա

յուրաքանչյուր երեխայի զարգացման հնարավորություններին և ուժերին, կարողանա ճանաչել, հասկանալ և աջակցել սովորողներին, տիրապետի կոնֆլիկտները կանխարգելելու, լուծելու, մանկավարժական երկխոսությունային համագործակցություն և համատեղելիություն ապահովելու, կրթական միջավայրի բովանդակությունը համամարդկային և ազգային արժեքների զուգորդմամբ կառուցելու և դրանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու կարողություններին: Կրթական միջավայրի ձևավորման գործում կարևորվում է աշակերտակենտրոն մանկավարժական գործընթացի կազմակերպումը, աշակերտներին սովորել սովորեցնելու գաղափարի իրականացումը՝ ինքնուրույն ուսուցումը զարգացնելու միջոցով, որը ուսուցչին ստիպում է մտածել ինչպես համագործակցել երեխաների հետ, ինչ խնդիրներ դնել, ինչպես բարձրացնել նրանց պատասխանատվությունը ուսման նկատմամբ, ինչպես սովորեցնել աշակերտներին պլանավորել և ընդլայնել իրենց ուսումնառության հնարավորությունները:

Հինգերրորդ պայմանը՝ ողջ կրթական տարածքում /հիմնական և լրացուցիչ կրթության, դասարանական և արտադասարանական գործունեության/ մշակութաստեղծագործական միջավայրի ձևավորման անհրաժեշտությունն է, որը նշանակում է՝.

ա/կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների /աշակերտ, ուսուցիչ, ծնող և այլն/ համար ապահովել անձնային զարգացման հնարավորություններ՝ նրանցից յուրաքանչյուրի մեջ սեփական զարգացման սուբյեկտ դառնալու կարողություններ ձևավորելու միջոցով: Այսինքն , աշակերտի, ուսուցչի համար ստեղծել տվյալ պահին իր պահանջմունքներին բավարարող պայմաններ, որոնք ակտիվություն դրսևորելու համար նրա մեջ կառաջացնեն դրդապատճառներ և նրան կմղեն գործունեության՝ սեփական պահանջմունքները բավարարելու համար: Ներկայացնենք Վ.Ա.Յասվինի մշակած մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտների համար կրթական միջավայրի կողմից ստեծվելիք անձի զարգացման հնարավորությունների համալիրը. ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարման հնարավորություն, անվտանգության պահանջմուքի բավարարման հնարավորություն, խմբային նորմերի և գաղափարների յուրացման հնարավորություն /մասնավորապես դասարանի նորեկների համար/, սոցիալական պահանջմունքների /սիրո, հարգանքի, ընդունման, հասարակական աջակցության/ բավարարման հնարավորություն, գործունեության, աշխատանքի պահանջմուքի բավարարման հնարավորություն, ինքնագնահատականի պահպանման և բարձրացման պահանջմուքի բավարարման հնարավորություն, հատուկ հետաքրքրությունների, /հակումների, հոբբիի/ ոլորտներում ճանաչողական պահանջմունքների բավարարման և զարգացման հնարավորություն, շրջապատող միջավայրի գեղագիտական ձևավորման պահանջմունքի բավարարման

հնարավորություն, աշխարհի նկարագրի ինքնուրույն անհատական կանոնակարգում պահանջմունքի բավարարման և զարգացման հնարավորություն, մասնագիտության, ուսումնական գործունեության մեջ վարպետության ավելի բարձր մակարդակի հասնելու պահանջմունքի բավարարման և զարգացման հնարավորություն և, ի վերջո, անձի ինքնադրսևորման պահանջմունքի բավարարման և զարգացման հնարավորություն, որը կրթական միջավայրը կարող է ապահովել միայն մանկավարժական գործընթացի սուբյեկտների զարգացման հնարավորությունների ողջ համալիրի կազմակերպման արդյունքում: [6, 183-188] Համաձայնվելով կրթական միջավայրի կողմից ստեղծվելիք զարգացման հնարավորությունների Յասվինի համալիրի հետ՝ առաջարկում ենք ավելացնել նաև «ինքնատիպությունն ու անհատականությունը պահպանելու պահանջմուքի բավարարման հնարավորությունը, սեփական կարծիք ունենալու և այն արտահայտելու հնարավորությունը, իր կյանքին, ընտանիքին և ապագային վերաբերող հարցերում ընտրություն կատարելու, որոշում կայացնելու հնարավորությունը, երևակայելու, կյանքը կանխորոշելու, նախագծելու և պլանավորելու հնարավորությունները:

բ/առարկայատարածքային այնպիսի միջավայրի կազմակերպումը, որը կապահովի աշակերտի ֆիզիկական և հոգեբանական առողջությունը, այսինքն՝ հաշվի կառնի էրգոնոմիկայի, գունահոգեբանական, գեղագիտական պահանջները, ինտերյերը ֆունկցիոնալ նշանակությանը այնպես համապատասխանեցնելու գործոնը, որ այն աշակերտության և ուսուցչության շրջանում առաջացնի գեղագիտական զգացում, բավարարի նրանց տեղեկատվական պահանջմունքը, նպաստի աշակերտի հոգևոր և մտավոր, երևակայության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը, նրանց մղի ակտիվության, ապահովի սովորողի և բնության միասնությունը, ստեղծի անհատական հարմարավետության զգացում: Էրգոնոմիստները, իրավամբ, գտնում են, որ տաք կամ սառը գույներն ազդում են նույնիսկ սենյակի ջերմաստիճանի վրա: Նրանք պնդում են, որ դպրոցական այն շենքերը, որոնց ճարտարապետությունը հարմարավետ է բոլոր երեխաների համար, ճիշտ են լուծված սոցիալական հաղորդակցման և հասարակական վայրերի /սպորտ-դահլիճի, գրադարանի, ճաշարանի և այլն/ կառուցվածքը, դրական ազդեցություն են թողնում աշակերտների վրա՝ նվազեցնելով դրսևորվող ագրեսիվ վարքի և վանդալիզմի հնարավորությունը:

գ/Հումանիտար հոսքի դասերի համար նախատեսված դպրոցի կաբինետները ձևավորելիս նկատի ունենալ, որ դրանք պահանջում են լայն, տարածքային միջավայր՝ աշակերտների հոգեբանական բարդույթները և ճնշումները հանելու համար: Դա սովորողներին կօգնի հանգիստ, անկաշկանդ, ինքնավստահ լինել, ազատ արտահայտել սեփական տեսակետներն ու կարծիքները:

դ/Բնագիտական հոսքի դասերի համար նախատեսված դպրոցի կաբինետները ձևավորելիս հիշել, որ դրանք պետք է աշխատեն տարբեր համակարգերում /մարդ-մարդ, մարդ-բնություն, մարդ-տեխնիկա-գիտություն, մարդ-խորհրդանիշ և այլն/, երբեմն էլ՝ բոլոր համակարգերում միաժամանակ: ՈՒստի, առաջին պլան է մղվում մանկավարժական գործընթացի սուբյեկտների ֆիզիկական անվտանգության հիմնախնդիրը:

Վեցերորդ պայմանը ծնողական կրթության կազմակերպման միջոցով ընտանեկան բարենպաստ միջավայր ստեղծելու մանկավարժական պահանջն է: Անշուշտ, սա ծանր պարտականություն է: Սակայն, դպրոցից բացի ոչ մի ինստիտուտ չի կարող ընտանիքին այս գործում ավելի լավ սատարել: Այլապես հօդս կցնդեն և՛ դպրոցի և՛ ընտանիքի ջանքերը, որովհետև այն, ինչ երեխան տեսնում, զգում, սովորում է դպրոցում, կարող է հակասել ընտանիքի կյանքի պրակտիկային: Արդյունքում, այն ինչ սովորել է երեխան, կդառնա վերացական ու կյանքից կտրված: Ավելին, աշակերտը կկանգնի սեփական դիրքորոշումը, վարքը, գործողություններն ընտրելու դժվարության առջև: Այս ամենը կարող են բացասաբար ազդել նրա ոչ միայն դաստիարակության, այլև առողջության վրա: Դրանից խուսափելու միակ ճանապարհն այն է, որ սովորողի դաստիարակության և զարգացման գործում դպրոցն ու ընտանիքը դառնան գործընկերներ: Առանց դպրոցի և ընտանիքի փոխհամագործակցության, անհնար է երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացումը: Ծնողների շրջանում մեր իրականացրած հարցումները հավաստում են, որ նրանք գիտակցում են, որ միայն դպրոցի հետ համագործակցելը կօգնի հաջողությամբ լուծել իրենց երեխաների կրթական խնդիրները և կապահովի նրանց համար բարենպաստ կրթական միջավայր: Սակայն ոչ բորոր ծնողներն են գիտակցում, որ երեխայի կրթական հաջողությունները մեծապես կախված են նաև նրանից, թե որքան են իրե՛նք կարողանում ժամանակ տրամադրել, օգնել, աջակցել երեխային, որքանո՞վ են տանը հարմարություններ և ընտանեկան նպաստավոր, ջերմ միջավայր ստեղծել նրանց ուսումնառության, ազատ ժամանակի կազմակերպման, հոգեկան ու ֆիզիկական առողջության պահպանման համար: Որքանո՞վ են կրթությունը, դաստիարակությունը, ուսումն ու գիտելիքը տվյալ ընտանիքում արժեք, որքանո՞վ է իր կյանքին վերաբերող խնդիրների լուծման ու համապատասխան որոշումների ընդունման գործում երեխայի մասնակցությունը և ձայնը լսելի ընտանիքում: Ծնողների մի մասն էլ մոռանում է, որ իրենց օրինակը երեխաների համար ընդօրինակման օբյեկտ է, և իրենք ստիպված են նրանց ներկայությամբ սթափ և հավաքված լինել: Իհարկե, այս բոլոր հարցերում ընտանիքի առաջին և շատ դեպքերում, միակ օգնականը ուսուցիչն է, ով կարող է ծնողին գիտելիքներ հաղորդել և աջակցել նրան երեխաների համար ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելու գործում:

Իհարկե, դպրոց – ընտանիք համագործակցությունը միակողմանի չի լինում. Ծնողը ևս

շատ հարցերում կարող է դպրոցին, ուսուցչին սատարել և դա դպրոցի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի: Ծնողները կարող են ուսուցչին օգնել կրթական միջավայրի ձևավորման, երեխաների արտադասարանական աշխատանքի և ազատ ժամանակի կազմակերպման, նրանց և ուսուցիչների համագործակցության խորացման, մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում:

Դպրոցը կարող է ընտանիքին օգնել երեխաների դաստիարակության, զարգացման և ձևավորման գործում երեխայի ընտանեկան միջավայրի հումանացման գործին նպաստելու միջոցով: Դա ենթադրում է.

1. Ծնողներին դպրոցի հետ կապել: Մի կողմից վստահել ծնողների դաստիարակչական հնարավորություններին, մյուս կողմից՝ բարձրացնել նրանց մանկավարժական կուլտուրայի և դաստիարակության մեջ նրանց մասնակցության մակարդակը:

2. Քարոզել ընտանեկան դաստիարակության դերը, երեխաների աչքում բարձրացնել ծնողների հեղինակությունը, հենվել ընտանեկան դաստիարակության ուժեղ կողմերի, լավագույն ավանդույթների վրա:

3. Օգնել ծնողներին նշանակում է.

ա/ Գիտակցել, որ ընտանիքը երեխային պետք է ընդունի որպես մարդ և ոչ թե որպես ծնողների կցորդ, որ մանկությունը երեխայի կյանքն է և ոչ թե ապագա կյանքին նախապատրաստող ժամանակաշրջան, որ երեխան ունի իր հետաքրքրությունները, հակումները, պահանջմունքները, որոնք պետք է ճանաչել և ընդունել, որ իրեն և իր կյանքին վերաբերող հարցերի քննարկման և որոշման գործում նա ունի ձայնի իրավունք,

բ/ Կարևորել տան հարդարանքը և ընտանիքի կենսագործունեությունը մշակութային արժեքներով համալրելու գործը /գրադարան, մանկական կահույք, լուսավորություն, հոգևոր և նյութական իրեր, առարկաներ և այլն/.

գ/ Ընտանեկան դաստիարակությունը կառուցել.

- «աճող մարդու նկատմամբ մարդասիրության ու գթասրտության, երեխայի հետ բաց և վստահելի հարաբերություններ հաստատելու»,
- «երեխային ընտանեկան կենսագործունեության մեջ ընդգրկելու»,
- «երեխային մշտապես օգնելու պատրաստակամության »,
- « երեխայի անվտանգության զգացումը ապահովելու»,
- « երեխայի նկատմամբ բռնությունների, ֆիզիկական պատիժների բացառման»,
- « երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման /սեփականության իրավունք՝ իր սենյակը, իր նամակը, իր անկյունն ունենալը/ և ընտանիքում առողջ մթնոլորտ ստեղծելու»,
- «երեխային սիրելու և բոլոր իրավիճակներում նրա կողքին լինելու»սկզբունքներով:

դ/Որպես ընտանեկան դաստիարակության **մեթոդներ** որդեգրել ծնողների անձնական օրինակը, քննարկումը, փոխվստահությունը, փոխպայմանավորվածությունը, ապրումակցումը, հումորը, հանձնարարությունը, վերահսկողությունը, ավանդույթների հիման վրա դաստիարակելը, խրախուսելը, գովելն ու անձը չվիրավորելը և այլն:

ե/ **Ընտանիքի խնդիրները** տեսնել երեխայի մանկությունը երջանիկ դարձնելու, նրա ՛՛ես՛՛-ի զարգացման, ինքնավարության և ինքնուրույնության ունակությունների դաստիարակության, ինքնազարգացման և ինքնադրսևորման համար առավելագույն պայմանների ստեղծման, երեխայի սոցիալ- տնտեսական, հոգեբանական, ֆիզիկական պաշտպանվածության, առողջության ապահովման մեջ:

Յոթերորդ պայման: Ուսումնական հաստատության կրթական միջավայրի հումանացման կարևոր բաղադրիչ պիտի դառնան նաև **դպրոցի շրջակա միջավայրը և համայնքը:** Մեր կարծիքով, դրա համար անհրաժեշտ է՝

1. Դպրոցը դարձնել համայնքի մշակութային կենտրոն: Համայնքի դպրոցական տարիքի բոլոր երեխաներին ընդգրկել հանրակրթության մեջ՝ դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը և թաղամասի երեխաների կապը դպրոցի հետ: Դպրոցի ողջ նյութատեխնիկական բազան մատչելի դարձնել նրանց համար /գրադարան, սպորտ-դահլիճ, համակարգչային դասարան, խմբակներ և այլն/: Դաստիարակչական աշխատանքը կառուցել՝ հաշվի առնելով համայնքի ավանդույթները:

2. Ապահովել կապը դպրոցի, ծնողական համայնքի, անչափահասների գործերով զբաղվող խորհուրդների, համայնքում գործող բոլոր մանկական միավորումների, կենտրոնների, արտադպրոցական հիմնարկների հետ:

3. Յուրաքանչյուր դպրոցում ստեղծել հոգեբանական և սոցիալական ծառայություններ կամ ունենալ պրոֆեսիոնալ, իրազեկված, երեխաների համար հետաքրքիր և երեխաներին գրավել կարողացող դպրոցական հոգեբան և սոցիալական ծառայող:

4. Դպրոցի բոլոր երեխաների ազատ ժամանակը կազմակերպելու և նրանց փողոցից կտրելու համար ստեղծել ըստ հետաքրքրությունների ակումբներ, խմբակներ, մշտապես կազմակերպել տարբեր միջոցառումներ, հանդիպումներ՝ միկրոշրջանի անվանի մարդկանց հետ, շաբաթօրյակներ՝ դպրոցին հարող փողոցները մաքրելու համար, մրցույթներ՝ ՛՛Հայրենիքը սկսվում է իմ փողոցից՛՛ և այլ թեմաներով: Երեխաներին ընդգրկել համայնքի համար կարևոր ծրագրերի իրականացման գործում: Այս ամենը երեխային կօգնի՝ ինքնաիրացվել, չվախենալ փողոցից, հակառակը, իրեն զգալ իր համայնքի տերը, ճանաչել միկրոշրջանում ապրող մարդկանց, հաստատել իր ՛՛Ես՛՛-ը:

5. Երեխաների մեջ ձևավորել անձնական այնպիսի որակներ /հանդուրժողականություն,

ոչ ասելու, խոչընդոտներին դիմակայելու և դրանք հաղթահարելու, համոզելու, սեփական կարծիքը պաշտպանելու և այլ կարողություններ/ որոնք նրանց կօգնեն ոչ միայն դիմակայելու միջավայրի վատ ազդեցություններին, այլև ուժ ունենալու՝ դրանք փոխել և նույնիսկ արմատախիլ անել:

6. Փողոցի վրա ազդելու դրական եղանակներից են երեխաների ձայնը, կարծիքը հաշվի առնելը և համայնքի ծրագրերի և զարգացման նախագծերի մեջ նրանց ներգրավելը:Այս դեպքում նրանք կարող են հանդես գալ և՛ որպես պլանավորողներ /պարզել համայնքի կարիքները, մշակել գործունեության պլան, հավաքագրել կամավորների/, և՛ որպես վերապատրաստողներ /տարեկիցներին ծանոթացնել համայնքի ծրագրերի հետ և պարզել՝ նրանցից ովքեր ո՛ր ծրագրերում կարող են մասնակցել/, և՛ որպես գնահատողներ /իրականացնել հարցումներ, վարել հարցազրույցներ և պարզել ծրագրի արդյունավետությունը կամ ընտրել ներկայացված ծրագրերից լավագույնը/:

Ժամանակակից աշխարհում դպրոցը ստիպված է չեզոքացնել ոչ միայն փողոցի, այլև ԶԼՄ-ի, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների բացասական ազդեցությունները, հաշվի առնել, որ նրանք են ձևավորում հասարակական կարծիքը և մեծ հնարավորություն ունեն ազդելու անձի ու զանգվածների վրա: Շատ դեպքերում ՏՀՏ-ը դառնում են աճող սերնդի համադաստիարակներ և երեխայի վրա կարող են թողնել ինչպես դրական, այնպես էլ բացասական հետք, ընդհուպ ՝ ձևախեղել անձին: ՈՒստի, կրթական միջավայրի հումանացման գործում մեծ նշանակություն են ստանում ՏՀՏ-ի մանկավարժականացման և ուսուցչի կոմպետենտության [7, 59-66], համապատասխան մանկավարժական պայմանների [7, 66-70] ստեղծման, մեդիատեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ներդնելու հարցերը [8, 24-46]:Հետևաբար ութերորդ պայմանը Տեղեկատվական Հաղորդակցական տեխնոլոգիաների/ՏՀՏ/ մանկավարժականացման պահանջն է, որը ենթադրում է ՏՀՏ-ը ծառայեցնել մանկավարժական խնդիրների լուծմանը, դրանք օգտագործել մանկավարժական գործընթացում և սովորողին դարձնել մեդիակրող և մեդիաստեղծող:

Այստեղ ևս առանցքային է ուսուցչի դերը. նա պարտավոր է երեխաների հետ միասին մշակել նեթիկետի կանոնները [9, 48-61] և վերահսկել դրանց իրականացումը, ծնողների հետ միասին մշտադիտարկումներ կազմակերպել ՝համացանցի բացասական ազդեցությունները կանխորոշելու և երեխաների սոցիալական մեկուսացումը կանխարգելելու համար: **Իններորդ պայմանը,** երեխաների մեջ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ձևավորելու և նրանց առողջ ապրելակերպի սկզբունքներով առաջնորդվելու հմտությունների փոխանցման ու յուրաքանչյուրին իր շրջակա միջավայրի ստեղծողն ու կառուցողը դարձնելու պահանջն է:

Այսպիսով, առանձնացվեցին կրթական միջավայրի հումանացման ինը մանկավարժական պայմաններ, սակայն դա չի նշանակում, որ ցանկը փակվեց: Ելնելով տվյալ դպրոցի տիպից, տարածաշրջային և այլ առանձնահատկություններից, վերոհիշյալ ցանկը կարող է հարստացվել:Կարևորն այն է, որ յուրաքանչյուր մանկավարժական նպատակ ու պայման ծառայի երեխային և իրականացվի հանուն երեխայի զարգացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Декларация Конференций Организаций Обьединенных Наций по проблемам окружающей человека среды , Стокгольм 1972.
2. Джуринский А.Н. “Зарубежная педагогика” Москва, Гардарики 2008.
3. Крылова Н. Б., Александрова Е.А. Очерки понимающей педагогики, М., Народное образование 2003.
4. Практика внедрения принципов качественной педагогики ISSA, ЮНЕСКО, 2015.
5. Маркович Д.Ж.Социальная экология, М., 1991.
6. Ясвин В.А. Образовательная среда- от моделирования к проектированию, М., Смысл 2001.
7. Թոփուզյան Ա.Օ. և հեղինակային խումբ, Մեդիակրթությունը տարրական դպրոցում, Երևան, 2019:
8. Թոփուզյան Ա.Օ. և հեղինակային խումբ, Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում, Երևան, 2020:
9. Թոփուզյան Ա.Օ. և հեղինակային խումբ, Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Երևան, 2018:

PEDAGOGICAL CONDITIONS FOR THE HUMANIZATION OF THE EDUCATIONAL ENVIRONMENT

A.O. Topuzyan's article entitled "Pedagogical conditions for the humanization of the educational environment" defines the term "humanization of the educational environment." There are given the competencies of the teacher in the humanization of the educational environment and the necessary pedagogical conditions. The role and functions of the school, family, community, ICT are highlighted, there are mentioned the complex of opportunities for the development of the person which the educational environment must provide.

Key words: *pedagogical conditions, environment, influence, humanization, personality development, educational environment*